ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1279-Ա « 08 » ապրիլի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԻՈՆ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Լիոնի Մետրոպոլիայի նախագահ Բրունո Բեռնարի և Լիոնի քաղաքապետ Գրեգորի Դուսեի հրավերը՝ Երևանի, Լիոնի Մետրապոլիայի և Լիոնի քաղաքապետարանի միջև եռամյա համագործակցության համաձայնագիր ստորագրելու, ինչպես նաև եռակողմ համագործակցության հարցեր քննարկելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2025 թվականի ապրիլի 13-ից 15-ը գործուղել Ֆրանսիայի Հանրապետության Լիոն քաղաք՝ հետևյալ կազմով.

Տիգրան Ավինյան	Երևանի քաղաքապետ
Լևոն Հովհաննիսյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Լուսինե Ղարիբյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի պետ

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված ծախսերն իրականացվում են Երևանի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին, բացառությամբ գիշերավարձի, որը հոգում է հրավիրող կողմը:

3.Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանի բացակայության ընթացքում՝ վերջինիս պարտականությունների կատարումը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանին:

4.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի պետ Լուսինե Ղարիբյանի բացակայության ընթացքում բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետ Դավիթ Գևորգյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ